

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության  
վարչության նիստի

ք. Երևան

29 մարտի 2019թ.

**Օրակարգ՝**

1. «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծի հիմնադրույթների քննարկում

**Մասնակիցների ցուցակ՝**

- |                    |                        |
|--------------------|------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան  | 8. Լիաննա Գալստյան     |
| 2. Աննա Կարախանյան | 9. Կարեն Գասպարյան     |
| 3. Արամ Վերոյան    | 10. Կոլյա Հովհաննիսյան |
| 4. Արման Խաչատրյան | 11. Միսակ Խաչատրյան    |
| 5. Արման Ներսիսյան | 12. Սիրանուշ Վարդանյան |
| 6. Արմեն Մուրադյան | 13. Քրիստինա Հակոբյան  |
| 7. Իգոր Մկրտումյան | 14. Քրիստինե Գյոնջյան  |

Նիստի սկզբում նիստի նախագահող ընտրվեց Իգոր Մկրտումյանը, քարտուղար՝ Լիաննա Գալստյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց հաստատել օրակարգը: Առաջարկություն հնչեց օրակարգում ներառել դիմում ներկայացրած մի շարք անձանց կազմակերպությանն անդամագրելու մասին հարցը, սակայն քվեարկության արդյունքում ձայների-12 կողմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշվեց օրակարգը թողնել անփոփոխ:

1. «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նոր խմբագրությամբ կանոնադրության նախագծի հիմնադրույթների քննարկում


Նիստը նախագահողն առաջարկեց քննարկումն սկսել կազմակերպության անդամ դառնալու իրավասություն ունեցող անձանց շրջանակների հստակեցման հարցից: Սակայն Կոլյա Հովհաննիսյանն առաջարկեց սկզբիցնեթ քննարկել ու սահմանել կազմակերպության գործունեության առարկան և նպատակը՝ հիմնավորելով, որ կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների սահմանումը թույլ կտա կողմնորոշվել կազմակերպության անդամ դառնալու իրավասություն ունեցող անձանց շրջանակների հստակեցման հարցում:

Ծավալվեց քննարկում, որի ընթացքում վարչության անդամները տարբեր մտքեր արտահայտեցին կազմակերպության գործունեության առարկայի և նպատակի շուրջ: Քննարկումների արդյունքում ձևավորվեց երկու մոտեցում: Առաջարկվեց գործադիր տնօրենին տալ երկու մոտեցումների ձևակերպումները և ներկայացնել վարչության առաջիկա նիստի քննարկմանը, ինչն առավել առարկայական կդարձնի քննարկումը:

**Առաջարկը քվեարկության դրվեց և միաձայն կողմ ընդունվեց:**


Որոշում: Կազմակերպության գործադիր տնօրենին կազմակերպության վարչության առաջիկա նիստին ներկայացնել կազմակերպության գործունեության առարկայի և նպատակի վերաբերյալ քննարկված երկու մոտեցումների ձևակերպումները:

Նիստի նախագահող՝



Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝



Լիաննա Գալստյան